ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. հունվարի 31-ից փետրվարի 2-ը ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի և ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետ Սերգեյ Շահնազարյանի Ղազախստանի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**
   Ավագ Ավանեսյան
   Սերգեյ Շահնազարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
   ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Ղազախստանի Հանրապետություն (ք. Ալմաթի), 2023թ. հունվարի 31-ից փետրվարի 2-ը

4. **Հրավիրող կողմը՝**
   Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը՝**
   Մասնակցություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի գնումների խորհրդատվական կոմիտեի նիստին

6. **Քննարկված թեմաները՝**

- գնումների գործընթացներում կիրառվող բանկային երաշխիքների փոխադարձ ճանաչման համաձայնագրի նախագիծը
- գնումների ոլորտում ազգային ռեժիմի գործունեության սկզբունքի կատարելագործում
- գնումների համակարգի ամբողջական թվայնացում համատեքստում համաձայնագրով սահմանված կարգավորումների կատարելագործում
- ապրանքների ծագման երկրի որոշման մոտեցումների կատարելագործում, ինչպես նաև անդամ պետությունների արդյունաբերական ապրանքների եվրասիական ռեգիստրի ծրագրային ապահովման արդիականացման պլանների ներկայացում
- գնումների խորհրդատվական կոմիտեի գործունեության կանոնակարգում փոփոխությունների կատարում
- գնումների խորհրդատվական կոմիտեի հաջորդ նիստի անցկացման վայրի և ժամկետի որոշում

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Հանդիպման ընթացքում հայկական կողմի ներկայացուցիչները առաջարկվել են քննարկման առարկա դարձնել նաև ԵԱՏՄ համաձայանագրում գնումների վերաբերող կարգավորումները վերանայելու և դրանք առավել ճկուն դարձնելու հարցերը՝ ներկայացնելով կոնկրետ վերանայումների առաջարկություններ: Առաջարկները ընդունելի են համարվել կոմիտեի անդամների կողմից: Պայմանավորվածություն է ձեռք բերվել փորձագետների մակարդակում սկսել համաձայնագրում փոփոխությունների նախագծի մշակման աշխատանքները և դրանք բովանդակային քննարկման առարկա դարձնել կոմիտեի հաջորդ նիստի ընթացքում:

Միաժամանակ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի կողմից շնորհանդեսի ձևով ներկայացվել է Հայաստանի գնումների համակարգի թվայնացման նոր ծրագիրը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Հանդիպման մասնակից երկրների ներկայացուցիչների միջև տեղի են ունեցել տարաբնույթ քննարկումներ՝ գնումների ոլորտում բարեփոխումների իրականացման փորձի փոխանակման ուղղություններով:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը՝**

Recoverable Signature

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

06.02.2023թ.